ՀՀ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ «ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՊԵՐՃՈՒՀԻ ԵՎ ԱՐՄԷՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ—ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑՄԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԱՌԱՐԿԱ—ՖԻԶԻԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉ—ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ—ԱԻԴԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐ 2023թ

ՆԱԽԱԲԱՆ

Ժամանակակից հասարակությունը ստեղծագործակա միտք ունեցող անձանց կառիք ունի: Համապասխանաբար դպրոցի պահանջն է դաստիրակել այդ ստեղծագործությունը, մոտիվացումը, յուրորինակությունը իր սաների մեջ: Հասարակության արագ զարգացումը, սրընթաց պրուգրեց և շրջապատող իրականության արագ փոփողությունները պահանջում են, որպեսզի մարդիկ կարողանան համապասխան մոտեցում ցուցաբերել առկա փոփոխություններին՝ սեփական գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:Այս պայմաններում շատ կարևոր է ,որպեսզի հասարակության անդամները ցուցաբերեն մտքի ճկունություն և տարբերվող մտածելակերպ :Իսկ դրա հիմքը դրվում է հենց դպրոցում:Այս պալմաններում մանկավարժների առջև բավականին հստակ պահանջ է դրված աշակերտների մեջ սերմանել այնպիսի որակներ ինչպիսիք են ինքնուրույնությությունը,նոր գիտելիքներ ստանալու և դրանք մշակելու ունակությունը,ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հատկությունը,տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքները մշակելու,վերլուծելու և դրանք առանձնահատուկ կերպով կիրառելու ձգտումը:Կարևոր խնդիր է նաև սովորեցնել երեխաներին ստեղծագործաբար և էներգիայով լեցուն մոտենալ առկա խնդիրներին ,չվախենալով ի հայտ եկող դժվարություններից:

Որպեսզի աշակերտի մոտ ձևավորվեն այս բոլոր հատկանիշները,կարևոր է ուսուցչի դերը:

Մանկավարժը պետք է կարողանա գտնել ուսման այնպիսի եղանակներ և կիրառի այնպիսի միջոցներ ,որոնք թույլ կտան զարգացնել երեխայի մտածողությունը,ստեղծագործական միտքը,մտքի ճկունությունը և արագությունը,նոր լուծումներ փնտրելու և գտնելու կարողությունը:

Մոտիվացված մարդկանց կարիք զգացվում է հասարակության սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում:ԵՎակնհայտ է ,որ այդ պահանջը գնալով աճելու է :Հենց մոտիվացված անձիք են ապահովում սոցիալական առաջընթացը,հասարակության զարգացումը:

Քանի որ հենց դպրոցն է այն առանցքային և կարևոր գործոններից մեկը,որը նպաստում է երեխաների մոտիվացիայի ձևավորմանը և զարգացմանը,ապա մանկավարժների առջև շատ կարևոր խնդիր է դրված այս ուղղությամբ:

Տվյալ հետազոտական աշխատանքի շրջանակներում ես իմ առջև նպատակ եմ դրել ուսումնասիրել աշակերտների մոտիվացման,ստեղծագործականության խթանման գործընթացի առանձնահատկությունները դասերի ընթացքում:Այս նպատակի իրացմանն անհրաժեշտ է մոտենալ քայլ առ քայլ,կիրառելով տարբեր մանկավարժական միջոցներ,ուսուցման մեթոդներ և այլն:

Դպրոցում աշակերտների մոտիվաման գործում կարևոր նախապայման է մանկավարժի ներազդեցությունը նրանց մտածողության գործընթացի վրա:

Այսպիսով մոտիվացիան աշակերտի ներքին ակտիվությունն է ,որը կապված է նրա հետաքրքրությունների ,բնավորության և անձի առանձնահատկությունների ,մտածողության առանձնահատկությունների հետ:

Ստեղծագործական գործունեությունը նպաստում է դպրոցականների մոտ բարձրագույն հոգեկան ֆունկցիաների զարգացմանը,ինչպիսիք են հիշողությունը մտածողությունը, ընկալումը, ուշադրությունը, ինչն իր հերթին ազդում է աշակերտների կողմից՝ գիտելիքների, հմտությունների և կարողությունների յուրացմանը, որոնք նրանք ստանում են դասի ժամանակ:

Այս պարագայում շատ կարևոր խնդիր է աշակերտների մոտ հետաքրքրություն խթանել առաջադրված խնդրի, մատուցվող նյութի հանդեպ:

Հետաքրքրության առկայությունը աշակերտի մոտ նպատակաուղղված կերպով տանում է նրան առաջադրված խնդիրների իրական իրագործմանը և լուծմանը Տարբեր եղանակներով: Ավելին հետաքրքրությունը խնդրի հանդեպ զգալի կերպով ընդլայնում է աշակերտի աշխարհայացքից և կենսական փորձը, ծանոթացնում է նրան տարբեր տեսակի գործունեությունների հետ, ակտիվացնում և զարգացնում է նրա ընդունակությունները և հոգեբանական առանձնահատկությունները:

Ժամանակակից դպրոցում աշակերտը ուսումնական գործընթացում հանդես է գալիս որպես ուսումնառության սուբյեկտ, համագործակցում է ոսուցչի համադասարանցիների հետ: Սա հենց այն անձնային-կողմնորոշված ուսումնառության ուժն է, որը հանդիսանում է մոտիվացիայի զարգացման բարենպաստ գործոն: Հենց այդպիսի միջավայրում մանկավարժը պետք է առաջին հերթին, ձգտի բարենպաստ պայմաններ ստեղծել աշակերտների մոտիվացման լիարժեք զարգացման համար, քանի որ մոտիվացված լինելը թույլ

է տալիս աշակերտին հանդես գալ որպես ուսման գործնթացի ակտիվ մասնակից, իրականացնել սեփական մտահաղացումները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մենք ապրում ենք գիտատեխնիկական հզոր հայտնագործությունների,դրանց կիրառման տարածության վրա խոսք և պատկերներ փոխանցելու ֆանտաստիկ մի դարաշրջանում:

Իմնշած դարաշրջանն իր հետ բերել է նաև որոշակի մեծ ու փոքր խնդիրներ,որոնց լուծումները գտնելու համար հասարակությանն անհրաժեշտ են մեծ էներգիայով ,աշխատասիրությամբ ու որ ամենակարևորն է մոտիվացված անդամներ,որոնք սիրով կփորձեն լուծել իրենց առջև ծառացած հարցերն ու խնդիրները

Հետազոտական աշխատանքին հատուկ են հետևյալ փուլերը



Հետազոտություն կատարելն ասոցիացվում է /կամ կարելի է համեմատել/ճանապարհորդության ,անալիտիկ մտածողության,ինքնուրույն ուսումնասիրություն կատարելու հետ:Իսկ գիտելիքների որոնման ուղին դժվար

է ,բազմաչարչար: Իսկ այդ ուղին մոտավորապես կարելի է նշել հետևյալ սխեմայով,

1 Ընտրում ենք հետազոտական հարց

2 Որոշում ենք հետազոտության նպատակը

3 Պլանավորում ենք ռիսկերը

4 Հաշվի ենք առնում ժամանակը

Իսկ դրանցից յուրաքանչյուրը անցնում է հետևյալ բաժինները

Հետազոտություն- •Ընդհանուր տեղեկությունների հավաքում
•Անհրաժեշտ ինֆորմացիա
•Մեթոդներ
•Ինֆորմացիայի գրանցում

Հտազոտման մեթոդները- •Տպագիր և առցանաց
•Դիտումներ և չափումներ
•Հարցազրույցներ
•Փորձեր և այլն:

Համադրում- •Հետազոտության հարցին և նպատակին Համադրել համապատասխան ինֆորմացիայի ընտրություն:

Համակարգում- •Հետազոտության դրույթների հստակեցում:
•Մեդիագրագիտության օգտագործում:

Նպատակ

Մոտիվացիա բառը շատ արդիական է ,այդ իսկ պատճառով կան շատ ասույթներ,օրինակ «մոտիվացրու քեզ և մոտիվացրու ուրիշներին»:Մոտինացիան նպատակ ունի վաղվա առաջնորդներին զինել ինֆորմացիայով,ոգեշնչել և մոտիվացնել բոլոր նրանց,ովքեր լի են նոր ու շրջադարձային գաղափարներ իրագործելու պատրաստակամությամբ և վստահ առաջ են շարժվում ավելի լավ ու պայծառ ապագա կերտելու համար:
Մոտիվացիայի փոխարեն շատ հաճախ օգտագործում են դրդապատճառ,շարժառիթ բառերը:Դա ներքին վիճակ է,որն ակտիվացնում և ուղղորդում է մարդու վարքը:
Անձին մոտիվացնելու էությունը դա տեսությունների,կարիերիայի,ուղու վերաբերյալ գիտական գիտելիքների հաղորդումն ու արդյունավետ աշխատանքի նկատմամբ դրական մոտիվացիայի ձևավորումն է:
Մոտիվացիան ներքին և արտաքին գործոնների համակազմ է, որը դրդում է մարդկանց իրականացնել գործողություններ իր նպատակին հասնելու համար:
ԵՎ պարզ է ,որ անձի յուրաքանչյուր գործունեության հիմքում ընկած է հենց մոտիվացիան:
Թվում է ,թե մոտիվացիան անհրաժեշտ է լավ չաշխատելու պարագայում,երբ մարդուն պետք է էներգիա :Կատարենք մեր աշխատանքը տվյալ իրավիճակում կամ մասնագիտություն ընտրելու հարցում:
Մոտիվացիա նշանակում է իմաստվորել աշխատանքը,վերաբերմունք դրսևորել,կատարել իմաստավորված գործողություններ,որոնք տալիս են էներգիա ,այսինքն ձեռք են բերում մոտիվացիա ,տեսնելով կամ պատկերացնելով արդյունքը-պրոդուկտը:Այսինքն,ենթադրենք գումար պետք է աշխատենք,ապա կմոտիվացվենք,երբ առաջին անգամ գումար վաստակենք:Մարդուն մոտիվացիա է տալիս նաև մեծ խնդիրներ լուծելոի գաղափարը,կատարել իմաստալից աշխատանք,որն էլ կտա մեծ էներգիա,այսինքն մոտիվացիա:Իսկ ինչպես մոտիվացնել երեխաներին դեպի կրթություն,շնորհիվ ազատության և պատասխանատվության:
Իսկ ինչ է պատասխանատվությունը-դա մարդու ազատության արտացոլումն է ,որքան մենք ավելի պատասխանատու ենք ,այնքան մեզ ավելի ազատություն է տրվում և հակառակը- որքան ազատ ենք ,այնքան ավելի պատասխանատու

ենք:ԵՎ որն է ազատությունը :Երեխաներին պետք է տանք ազատություն,այսինքն
1 Երեխաները մեզ պետք է վստահեն
2 Երեխաները մեզանից չպետք է վախենան
3 Նրանց չի կարելի պատժել սխալների համար
4 Նրանց պետք է սովորեցնել ռիսկի գնալ
5 Երեխաների համար չի կարելի վախենալ,պետք է նրանց հանդեպ ունենալ մեծ վստահություն ,այսինքն տալ ազատություն նշանակում է վստահել ,եթե չենք վստահում,նրանց էլ սովորեցնում ենք չվստահել մեզ:Իսկ երբ կա փոխադարձ վստահություն ,նրանք փորձում են աշխատել ու չեն վախենում սխալվելուց,այսինքն նրանց մեջ կա մոտիվացնող հզոր ուժ:ԵՎ ի վերջո երեխաները պատասխանատու են նրանց հանդեպ ովքեր իրենց վստահում են:Մենք չպետք է վախենանք նաև երեխաների ճանապարհին հանդիպող դժվարություններից,նրանք աճում են և մոտիվացվում,երբ հաղթահարում են առաջացած դժվարությունները և լինում են ավելի երջանիկ:
Մոտիվացիայի ձևերից են նաև հետևյալ պնդումները
• Աշակերտներին ներառենք որոշումների կայացման գործընթացի մեջ:
•Տանք նրանց լուծելու լուրջ խնդիրներ ,քննարկենք սխալները հավաստի դիրքերից,ցույց տանք ,որ երբեմն մենք էլ կարող ենք սխալվել և մենք ընդունում ենք մեր սխալները:Մենք էլ մեր հերթին ենթարկվենք նրանց ,թույլ տանք որոշումներ կայացնել,օրինակ«ասա ինչ անե՞մ» ,«դու որոշիր»«գործիր ինքնուրույն» և այլն: Էներգիա ձեռք բերելու ճանապարհին ուսուցիչը պետք է տա ոչ թե պատասխաններ,այլ պետք է տա բաց հարցեր առանց տարբերակների,նրանց չկաշկանդելու ,աշխատել ցանկանալու,պրպտելու համար,պետք է պատմենք նաև մեր անհաջողությունների մասին նրանց ցույց տանք ,որ մենք էլ ենք սովորում և զարգանում/օրինակ մասնակցում ենք վերապատրաստման,գրում ենք հետազոտական աշխատանք և այլն/:
Մենք ուսուցիչներս պետք է օգնենք աշակերտներին զարգանալ,աջակցելով նրանց:Զարգացումը դադարում է երբ կա վախանվստահություն,աջակցության և սիրո պակաս :
Մոտիվացնելու համար աշակերտին պետք չէ տալ աշխատանք ,որը նրա համար դժվար է ,օրինակ տնային աշխատանքը չհասկանալու և չկատարելու

դեպքում գալիս է հուսահատություն և նա կորցնում է մոտիվացվելու ունակությունը:Մոտիվացիան թուլանում է նաև թվանշանային գնահատման դեպքում ,այդ իսկ պատճառով ավելի լավ է գնահատել ,որքան հնարավոր է քիչ:Մոտիվացիան ավելի արդյունավետ կլինի հետհայացք գցելով անցած ճանապարհին,աշակերտը հիմնավորի աշխատանքի նպատակը - ինչու՞,ժամանակ առ ժամանակ ետ գա իրական աշխարհ –
Ի՞նչ եմ ես արել-իրականության ստուգում:Հիշի իր հաջողությունները,իր ուժեղ կողմերը:Պետք է համեմատվի ինքն իր հետ -արդյո՞ք դու այսօր ավելի լավն էիր երեկ:Հավաքել սիրելիների նկարները,ֆիլմի հերոս,ծանոթներ ,բարեկամներ,լավ ընկերներ,որոնք կտան դրական էներգիա:Ի վերջո պետք է կարողանալ վիզուալացնել հաջողությունները:
Մոտիվացիան տեսանելի ու չափելի չէ,այն կարող ենք միայն զգալ:
Մոտիվացիա ,այսինքն-ի՞նչ անել,կարող ենք անել և ի՞նչ ենք ցանկանում անել:Ըստ Մասլոուի պահանջմունքների բուրգն ունի հետևյալ տեսքը

Մարդկային կարիքների հիերարխիայի տեսքով բուրգ



Իմ հետազոտության ժամանակ դասարանը բաժանեցի երեք խմբերի ,յուրաքանչյուրին տալով տարբեր մակարդակի ազատություն և վստահություն:

1-ին խմբին տվեցի լիովին ազատություն և ցույց տվեցի ,որ լիովին վստահում եմ նրանց:

2-րդ խմբին վստահեցի մասամբ և սահմանափակեցի ազատությունը:

3 -րդ խմբին համարյա զրկեցի ազատ լինելու հնարավորությունից և հասկացրեցի ,որ առանձնապես չեմ վստահում նրանց և սկսեցի ինքս ղեկավարել նրանց աշխատանքը:Արդյունքում ստացվեց հետևյալը

Այն խմբի աշակերտների աշխատանքը,որոնց վստահել էի լիովին ,աշխատանքները կատարեցին սիրով,արեցին շատ առաջարկներ,որոնց քննարկման արդյունքում գտան ավելի օպտիմալ ու խելացի լուծումներ:

Երկրորդ խմբի աշակերտները ևս անում էինառաջարկներ հարցի լուծման վերաբերյալ ,բայց իրենց պահվածքի մեջ նկատվում էր որոշակի կաշկանդվածություն:

Երորրդ խմբի աշակերտների մոտ բացակայում էր մոտիվացնող ուժը և նրանք սպասում էին խնդրի լուծմանը վերաբերվող իմ առաջարկներին,կամ ուզում էին ,որ որոշակի եզրահանգումներ կատարեին ոչ թե իրենք,այլ ես,որովհետև վախենում էին աշխատանքի ընթացքից և արդյունքից: Ենթադրում եմ ,որ

աշակերտների մոտ ձևավորելով որոշակի առումով «ազատ տարածք»սեփական մտքերն ու կարծիքները արտահայտելու ,բայց քննարկումներին մասնակցելու ,ինչպես նաև դրանք ինքնուրույն խթանելու և կազմակերպելու համար ,աշակերտները կարողացան բավականաչափ ինքնահաստատվել ,ավելի վստահ և ինքնուրույն զգալ դասի ժամանակ և տնային հանձնարարությունները կատարելիս:Շատ կարևոր գործոն է նաև ուսուցչի խրախուսելու և աշակերտին սխալվելու իրավունք վերապահելու մարտավարությունը,որն աշակերտները կիրառեցին նաև հետազոտական դասի ընթացքում:Իսկ այս գործոնները ինքստինքյան բերում են անձի մոտ ստեղծագործական մտքի խթանմանը,առավել ազատ և անկաշկանդ ուսումնական գործընթացի կազմակերպմանը:

Ենթադրվում է,որ ուսումնական գործընթացում աշակերտների մոտիվացիան խթանելու հիմնական բաղադրիչ գործողություններն են

- Խմբային աշխատանք
- Համագործակցություն
- Խնդիրների պլանավորում և բաշխում
- Համապատասխան նյութերի և դիդակտիկ միջոցների կիրառություն
- Ստեղծագործելու ազատություն
- Խրախուսում
- Սխալի իրավունքի պահպանում
- Հարգանք ընկերոջ կարխիքի նկատմամբ

Տվյալ հետազոտական աշխատանքի շրջանակներում ,հիմնվելով վերը թվարկված սկզբունքների վրա,նպատակ է եղել համապատասխան մեթոդական հնարքների և մանկավարժական նպատակաուղղված գործունեության շնորհիվ խթանել աշակերտների ստեղծագործականությունը, ուսումնական աշխատանքի ընթացքում մոտիվացիոն դրսևորման ունակությունը:

Այսպիսով կարող ենք անել հետևյալ եզրակացությունը,

Մոտիվացիան դա աշակերտներին գիտելիքներ ձեռք բերելու ճանապարհին հզոր միջոց է ,որը նրանց մղում է առաջ,ավելի վստահ և համոզված իրենց կատարած աշխատանքի կարևորության հարցում: Երեխան պետք է ստանա այնքան պատասխանատվություն,որքան ի վիճակի է տանել,երեխայի մեջ արժեքները ձևավորվում են դժվարությունները հաղթահարելիս:

Աշակերտներին պետք է լուրջ վերաբերվել ,որպես հավասարի:Աշակերտը գիտելիքի պակասը լրացնում է ստեղծագործելով և հորինելիս պետք չէ երեխային վախեցնել ,քանի որ նա մտածում է ,որ իր հորինածը շատ կարևոր է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով մոտիվացիան հիմնված է երևակայության ,ինտելեկտի,գյուտարարության ,շարժառիթների ոգևորության, տրամադրվածության և ինքնակրթության վրա:Կարելի է առանձնացնել մոտիվացիայի հետևյալ բաղադրիչները

1 Իրազեկություն,գիտելիք ,հմտություն,փորձ:

2 Ստեղծարար մտածողություն,ճկունություն ,համառություն որոշում կայացնելիս և իրականացնելիս,մոտիվացիոն ծրագրեր իրականացնելիս ճիշտ մեթոդների կիրառում:

3 Մոտիվացիա-ներքին,սեփական հետաքրքրվածությունը խնդրի լուծման ժամանակ,ինքնակատարելագործման ձգտում և գիտելիքների կիրառում,և արտաքին մոտիվացիա -նյութական խրախուսում և առաջխաղացում:

Մոտիվացիայի համար անհրաժեշտ են նոր մեթոդների ու գաղափարների ներդրում և դրանց ճիշտ օգտագործում:

Մոտիվացիան ,ինչպես յուրաքանչյուր ընդունակություն,անընդհատ զարգացման կարիք ունի :Կան մի շարք գործողություններ ,որոնց իրականացման դեպքում բարձրանում են աշակերտի մոտիվացիոն ընդունակությունները:

- Հոգեկան հատկանիշների վերլուծություն
- Մտքերի վերարտադրություն,մեթոդների ուսուցանում
- Խմբում աշխատելու մեծ ցանկություն և կանոնների պահպանում

Աշակերտների մոտիվացիայի բարձրացման կարևոր միջոց է նրանց կրեատիվության բարձրացումը:

Այսպիսով դպրոցում սովորող աշակերտների մոտիվացիան խթանում է մանկավարժական հաջող գործունեությունը, որն իրականացնում է համապասխան մեթոդների, միջոցների օգնությամբ, կիրառելով նորագույն տեխնոլոգիական միջոցներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Белоусова А.К., Вышквыркина М.А. Социальный интеллект| |Психология общения М. 2015
2. Лейтес Н.С. Способности и одаренность в детские годы М. 1984
3. Хрящев Н.Ю. психогимнаэтика в тренинге
4. Արամ Փախչանյան «Ինչպես մոտիվացնել երեխաներին դեպի կրթություն»